

Պոստալ
Տարիկ. 10 ֆր.
Վեցամս. 5 ֆր.
Արտասահման.
Տարիկ. 12 ֆր.
Վեցամս. 6 ֆր.
Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ
ԿԱՆԻՍԻԿ

Թերթ կը զրկուի կանխիկ վճարողներու միայն:



ՊԱՅՄԱՆՔ
Գրութիւնք եւ
չեն տրուիր:
Հասցէ
DIEAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՅՏԱԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

ԱԶԳԱՅԻՆ

Շամախի երկրաշարժի պահուն, հայոց եկեղեցիին մէջ յուղարկաւորութեան հանդէսի մը ներկայ կը գտնուի եղեր հոմ քաղաքի մը, որ քահանային յորգորներուն վրայ դուրս փախչելու ու է շարժում չէ ըրեր, շարժին էն սուկալի ցնցումներուն ատենն իսկ: Եւ իրաւալ եկեղեցին իր հաստամուր շինուածքին պատճառաւ բնաւ չէ փառուեր, այնպէս որ ներկաներուն ամենքն ազատեր են:

— Բէթերսպուրկէն հեռագիր մը կը տեղեկացնէ թէ Հանրային կրթութեան նախարարութիւնը ընդունած է այն խնդիրը, որով կ'ուզուէր Պատրիկորսքի հայերուն կողմէ գիմնալիսներու մէջ հայերէն լեզուի դաստիարակութեան արտօնութիւն ստանալ:

— Մայր-Աթուէն 450 ոսկի զրկուեր է կարող երկրաշարժէն արկածեալներուն: Ն. Ս. Օ. ծաթիւնը որ Տիգրիս կը գտնուի, հիմա ալ կը զբաղի եղեր Շամախի արկածեալներուն օգնութեան հասնելու եւ 2000 ոսկի նուիրեր է անոնց ի նպաստ: Կըսուի թէ երկրաշարժէն զերծ մնացած Հայ եկեղեցին ուխտատեղիի պիտի վերածուի:

— Առանց Պատրիարքարանի հրամանի, տուներու մէջ Պատկ ընող քահանայից մէկ ամսուան փիլիսոփայութիւն որոշուած է:

— Ն. Վեհափառութիւն ամենայն Հայոց Հայ-

րապետը յատուկ կանգալաւ մը հրամայած է Ամերիկայի Առաջնորդ Կեր. Յովսէփ Սրբազան Այվազեա ի եկեղեցական պաշտօնավարութեան իրաւունքէ զազարնալ հաշտել այն ամեն եկեղեցականները որոնք հովտական պաշտօն մը չունենալով Ամերիկայի մէջ, առանց առաջնորդարանի գիտութեան եւ արտօնութեան փերեզակի նման կը շրջին քաղաքէ քաղաք եւ կը շահագործեն քահանայական Ս. կոչումը եւ եկեղեցւոյ սրբազան խորհուրդինը:

— Ռուման, ոյ ոսման քաղաքէն կը գրեն թէ հանգուցեալ այլի տիկին Աննա Սիմէօնեանի հիմնարկած մատրան շինութիւնը փութով առաջ կը տարուի իր մասանդոյդացը կողմէ: Այն մատուաւ որ հայոց ալգ. գերեզմանատա կեդրոնավայրը բարձրացած է, մինչեւ առաջիկայ յուլիսին գաւառատա պիտի բլլայ եղեր օծման համար:

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳԻՐՈՒԹԵԱՆ

Երկայիս ձեւ կը զրկենք ի նպաստ Ազգ. երկսեռ վարժարանաց արեւած պարտահանդէսին հաշուեկշիւը, խնդրելով որ քանի հաճիք զայն հրատարակել նշանութեամբ 2եր պատ. շարաթմահանդէսի ժողովայ թիւերէն միայն մէջ ի Գիմալց Հագարարձութեան
Ս. Մեթրոպեան եւ Հոխիսիմեանց Ազգ. վրձնց.
Վ. Ասենազպրի Վ. Ատենապետի
Գ. Ասլանեան Վ. Գուրումճեան

Թուածուր 25 փետր. 1902

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

Ի նպաստ Ռուսմիսի Ազգ. երկսեռ վարժարանաց տնայն պարահանդեսի 16 Փետրուար 1902 շաբաթ իրիկուն:

ՄՈՒՏՔ


	Փր. Մ.
4 անձ 20 էն	80. —
1 « 15 էն	15. —
16 « 10 էն	160. —
1 « 5, 20 էն	5, 20
35 « 5 էն	175. —
4 « 4 էն	16. —
52 « 3 էն	156. —
1 « 2 էն	2. —
1 « 1 էն	1. —
400 հատ վիճակահանու-	
թեան տոմս	400. —
Քարեններու վաճառում	47, 50
Ծաղկի վաճառում	44. —
Հանդերձ պահելու համար	13, 30
	1415. 05

ԵԼՔ

Տպագրութեան, նամակ,	
դրօշմ.	44. 80
Նուագախոմբի	59. 90
Հինութիւնք	25. —
Ձանգան պիտոյք	25. 25
Մաքրութիւն դպրոցի	20. 20
Լէխատողներու	29. 35
Քառնէներու պատրաստու-	
թիւն	32. 40
Փոխադրութիւն	2. 80
Կոտրածներ	6. 15
Վիճակահանութեան նիւթի	
համար Տիկնանց խնամակա-	
լութեան	36. —
Զուտ շահ.	833. 10
	4 15. 05

Հոգաբարձութիւնս իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ այն ամեն մեծարոյ ազգայնոց՝ ոյք նուիրեցին վիճակահանութեան նիւթերը եւ անոնց որոնք՝ իրենց ձեռնարկութիւնը չը զլացան պարահանդէսը փայլուն եւ արդիւնաւոր ընելու համար:

Շանթ — Մուտքի տոմսակի գինն էր 3 Փր:



— Հրատարակուեցաւ ԲԱՆԱՍԷՐ օգտաշատ հանգէսի փետրվարի պրակը, հետեւեալ բովանդակութեամբ.

— Ուսանողութիւն. — 19րդ դարի նշանաւոր գիւտերը. Աիմագրութիւն. — Քաղկեդոնեան ժողով եւ Հայ եկեղեցի. — Անահիտի մեհեանը. — Արիւթի հողա-կոյտին վրայ արտասանուած երկու դավաճանականներ. — Մոմուշի բաժինը. — Գիտական նորութիւններ եւ լուրեր: Տարեկանն է 15 Փր. Հասցէն է

ՊԱՍՏԱՃԵԱՆ

112 Պաշտօն Ռօշըշուտ. Բարիկ

ԴԻՄԱԿԸ

Գիշերը շատոնց արդէն իր կէսը գլած անցած է.

Քովս ի վեր, սեղանին շրջած ճերմակութեանը վրայ մարմարին, ուր գարեջուրի թքոտ գաւաթները կազի կառուցներու նուազուն լոյսին տակ միամիտ նայուածք մը ունին գոգցես, երկու հոգի, քիթ քիթի, սիրով տաք խօսքի մը բռնուած են:

Աչքիս ծայրովը կը դիտեմ.

Հայ են երկուքն ալ. իրենց խօսակցութեան կը հասկնամ, Երիտասարդը, սեւեր հագած մեղրամօմի մը գունատ հատնումովը բարակցած դէմքով տղայ մը, անուշադիր իր շուրջի անցուդարձին, կեանքոտ զուարթութիւններուն որ կը պայթին ամէնը մէկ այդ շաբաթ գիշեր, բոլորովին համակուած, պաշարուած է իր քովին, որ հիանալիօրէն թաւիչէ մարտնչութիւն հագած դիմակաւոր կին մըն է. Իր երեսնո, երկայն մազերը որ իր ճերմակ կաթ ծոծրակն ի վար կը թափին, մեծակոհակ թաւալումները իր կուրծքին, իր ծանր զգեստին պիտի սեղմումներովը գրկուած, հրապուրիչ գոգը իր փորին, կարմիր գուլպաները՝ սրունքին մաշտ կըլորութիւններուն փաթթուող, բոլոր ատենք հրապուրիչ ու վտանգաւոր ալ ամբողջութիւն մը կը կազմէին այն կնիկանը քով, ու ես ալ իր մօտիկի տղուն պէս ժամ մը առաջ անոր դէմքը տեսնելու փափաք մը կը մեծցնէի ներսս. դէմք մը հարկաւ, արժանի միշտ այդ արքեւի մարմինի հարստութիւններուն:

Երկուքն ալ լոյիկ եղած էին արդէն:

— Սիրտս պիտի հատցունե՞ս ջանաւ, կըսէր տղան, պապատանքի միամիտ շեշտ մը դնելով իր խօսքին. իշտէ աս գիշեր քեզի հետ ունեցածըս, չունեցածս կերանք լմնցուցինք, պաշիկ մը պարէ երեսէդ:

Տղուն այս խօսքերուն մէջ այնքան միամիտ արգարութիւն մը, տակաւին աչքը նոր բաց-

ուած անփորձ երիտասարդի վշտոտ ու ցաւագին շեշտ մը կար որ սիրտս խածաւ :

— Պա՛գ, եղաւ պատասխանը կնոջ, ու գինովութեան այդ միջոցին, դիմակը քաշեց հանեց իր երեսէն վար :

Կատարեալ անկում մը որչափ տղուն նոյնչափ մըն ալ ինծի համար :

Երեւակայեցէք է՛ն տգեղ գէմբուէն մէկը այդ դիմակին տակ, որ արձան կտրեցուց տղան իր նստած տեղը, ապշած, յոստահատ, մինչ կինը կը կրկնէր.

— Պա՛գ :

Երկու վայրկեան ետքը երկուքն ալ գացած էին :

Ի՛նչ այուր, ի՛նչ ալ անուշ պիտի ըլլար եթէ այդ կնիկը, գէթ երիտասարդին իսկ խնայելու համար, իր եջեսը բանալու անմոռութիւնը չունենար մինչեւ իր բաժնուած վայրկեանին պատրանքը տալով անոր իր մարմինին բարեւէ գեղեցկութիւններովը, երկընքի պէս կապոյտ աչուի, կամար աղուոր յոնքերով, միրգի պէս փափուկ աղուամազոտ դէմքով պաշտուած կնկան մը :

Ու առ չէ՛ ամբողջ կեանքն ալ մեղի համար : Ամէն բան իր վայելուէն առաջ, իր սքողուած գոցուած, անհպելի հանգամանքին մէջ, մեր աչքին միշտ առարկան է ու կը մնայ պաշտումի, բայց անգամ մը ամբողջ իրականութեանը մէջ մերկապարանոց, ահա ան ատեն յափրացումը, ձանձրացումը այդ պաշտուածին հանդէպ :

Տարօրինակ բնասիրութիւն մարդկային բռնութեան, բնութիւն միշտ հետամտող նորին, ծածկուածին, արգիլուածին ու նոյն իսկ անոր առթելիք հետաքրքրութեանը մէջ իր հաճոյքը փնտաղ, փոյթ չէ թէ այդ վերջինը մարմինի ու հոգիի գեղեցկութիւններով ալ շատ վար ըլլայ առջինէն, թողութէն, լքուածէն :


Ու դիմակը այսօր ամէն բանի մէջ, դիմակ առետուրի, դիմակ առօրեայ կեանքի մէջ, դիմակ մը նոյն իսկ քաղաքավարութիւնն ալ, եթէ կուզէք :

Ես սիրած եմ այդ դիմակը, գէթ իբր ծածկող բոլոր բրտութիւններուն, բոլոր տգեղութիւններուն որոնց կը հանդիպինք մեր կեանքին ամէն մէկ քայլին, մեր ամէն օրուան սիրտհատնումներով, սիրտ մաշտ քննելով լեցուն կեանքին մէջ :

Լ. Շ.

ԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ

ՇՐՋՈՒՆ ԿԱԻԱԹԸ



Քիչ մը ծուռ գիրքով գրուած մարմարինէ և կամ երկու ոտքերը քիչ մը բարձրացած մարմարինէ գօնասօղի մը վրայ գլխի վար ջուրի պարտապաւառ մը գրէք, բայց չի մոռնանք, այս գործողութիւնը կատարելէ առաջ նոյն դաւաթին միմիայն բերանը ամբողջովին թըրջելու համար զայն (բերանը) անգամ մը պարզ ջուրի մէջ սուզելու էք, այս գործողութիւնէն ետքը գաւաթը մարմարինին վրայ անշարժ կը կենայ : Այն ատեն վառուած ծրագ մը կը մօտեցնէք գաւաթին, պատկերին մէջ տեսնուած ձեռով, զարմանօք պիտի տեսնէք որ գաւաթը պիտի սկսի շարժիլ և յառաջանալ, իբր թէ մեքենայ մը զայն կը մղէր :

1889ի Բարիքի արուեստահանդէսին մէջ վերայիշեալ կերպով առհերով յառաջացող շոգեկապ մը շինուած էր, այս շոգեկապին արուեստահանգէսը այցելողներուն մեծ զարմանք պատճառած ըլլալը այն ատեն լրացրաց միջոցաւ հրատարակուած էր :

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՔ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւտիւրիւծիւ Ֆրաւար վէ Հիքեայէլէր . Մալիւմաթը Ֆէննիյէ . Լուլաթը Լէթայիֆ . Ֆէննի Էյլէնճէլէր վէ Բէսիմլի Պիլմէճէլէր :

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյնէշր օլուլան մէղքիւր քիթապըն պիւրնճի ճիւտի խիթամ պօւլուպ, իտարէխտնէմիլուէ սաթըլմադտա արը ֆիյ 2 ֆրանք :

ԶԱՆԱԶԱՆՔ

ՎԻՔԹՈՐ ՀԻԼԿՈ

Վիքթոր Հիլկո մըշտ սագի փետուրէ գրիչով մը կը գրէր իր վէպերը, խոշոր ճերմակ թուղթի վրայ: Սովորաբար ոտքի վրայ կաշխատէր, ետին կը նետէր գրուած թուղթերը, սենեակին մէջ ցիրուցան ընելով: Վիքթոր Հիլկո մանաւանդ իր երիտասարդութեան հասուն տարիքին մէջ ամառ ձմեռ երկար պտոյտներ կընէր շարունակ, եւ 1828էն 1851 այսպէս Բարիզի մէջ թափառելով էր որ յղացաւ իր ամենէն ընտիր գործերուն նիւթը: Այդ պտոյտներուն ատեն էր որ կընտրէր նիւթը, կը տիրանար աշուր, կ'ընդլայնէր զայն: Շաբաթներ այսպէս կանցնէին և անկէ վերջը կարգը ընթերցումին կուգար: Երբ գրելու ըլլար, Վիքթոր Հիլկո կը նստէր մաքուր սենեակի մը մէջ, կաղնեփայտ սեղանի մը առջև և ամբողջ առտուններ անդադար կը սեղնէր ճերմակ թուղթերը, որոնք ցիրուցան կըլլային այն ատեն, գորգին վրայ: Երբ գրելը աւարտէր, բանաստեղծը կը ժողվէր զանոնք և թիւի կարգով կը շարէր: Գրածը երբէք նորէն չէր կարգար, այլ երբ թատերական արարուած մը կամ վէպի գիրք մը լմնցներ, այն ատեն միայն ամէնը աչքէ կանցնէր: Միեւնոյն ատեն չէր մոռնար իր սովորական պտոյտները, և ասոր համար է որ ֆիլիքսպէս չընկճուեցաւ անընդհատ աշխատութեան միջոցին: Բայց բացառութիւն մը եղաւ նորք Տալ Տը Բառիին համար, որ մէկ շունչով գրուեցաւ: Փայով իր անջատ բանաստեղծութիւններուն, Վիքթոր Հիլկո ներշնչումի ազդեցութեան տակ կը գրէր զանոնք, շատ անգամ ոտքի վրայ, նայն այն ժամուն երբ ներշնչումը կուգար: Այն ատեն բանաստեղծը կաղնեփայտ գրասեղանին տեղ իր ննջասենեակին մէջ գտնուող սեփայտ գլուցի մը առջև կանցնէր և իր ներշնչումները թուղթին կը յանձնէր: Այս գլուցիին առջև էր որ Վիքթոր Հիլկո ոտքի վրայ գրելու վարժուեցաւ:

ԱՂԵՐՍԱՆԴՐ ՏԻԻՄԱ

Վիքթոր Հիլկոյի ծննդեան հարիւրամեակը ու հանդէսները կատարելէ վերջ Բարիզ քաղաքը կը պատշաճաւոր յառաջիկայ Յունիս 24ին տօնել Ազեքսանդր Տիւմայի ծննդեան հարիւրամեակն ալ: Ազեքսանդր Տիւմա՝ որ 257 հա-

տոր վիպառանութիւն, 25 հատոր թատերգութիւն և երկու լրագիր հիմնած է, ծնած է 1802 Յունիս 24ին:

ԱՐՇԱԽԱՌՈՒՄԲ ՄԸ ԶԱՊՈՒԱՅ

Բարիզ հասած լուրեր կրօնն թէ 1900ին Ուիլիամիոյ Պոռնէօ, Սէլէպեան և Նոր Կուէնիոյ կղզիները գրկուած գիտական արշաւախումբին մեծ մասը շարուել է: Մարդակերներ Եւրոպացիներուն վրայ յարձակելով սպաններ են արշաւախումբին անդամները: 1901ին առտու մը երբ ամէն մարդ կը քնանար, յանկարծ հարիւրաւոր բնիկներ ձեռքերնին ջահերով յարձակել են Եւրոպացիներուն վրայ, և բիրերով նիզակներով լաւ մը տփեր են զանոնք: Քանի մը հողին կապելով քաջութեամբ տարեր են: Ուրիշ մը ծառին կապուել է, ասոր գանկը ջախջախուած էր և փորը արիւնլուայ: Երբորդի մը գըլուխը կտրուած և նիզակի մը վրայ անցուած էր իբրեւ յաղթութեան նշան: Զորքորդ մը խորովուած էր և բնիկները կը պատրաստուէին ուտել զայն: Մինչեւ որ օգնութիւն հասցուեցաւ, արշաւախումբին 25 անդամները սպաննուած և 35ը վիրաւորուած էին: Անդամներէն մէկն ալ գիշերը բնիկներուն կողմէ խորովուելով լափուած էր:

ՍՄԵՐԻԿԱՑԻՈՑ ԵՈՐ ԱՃԱՌՆԵՐԸ

Մ. Պալէթ անուն անձը Շիգակոյի մէջ յաջողած է մէկ քանի տեսակ բուսեղէններով եւ ելեքտրականութեան ուժով աճաւ մը պատրաստել, այս աճառը թէ լուացքի և թէ արդուզարդի շատ յարմար ըլլալով գինն ալ խիստ աժան է եղեր: Հնարիչը քիչ ատենուան մէջ մեծ հարստութիւն գիշեր է: (Կերեի թէ ասկէ ետքը ամեն բան ելեկտրականութեան ուժով պիտի ըլլաւ):

ԴԱՐԱՄՏԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Բարեկենդան. — Տարին օր մը, Արեւի թող,
Պարահանդէս. — Բ. կարգի յիմարանոց,
Պար. — Բժիշկը կանչէ,
Թեթեւ. — Կիներն էին, հիմա երիտասարդներուն անցաւ:

Տարեգրութիւն. — Անկոչ հիւրերուն օր :
Սուառէ . — Կուզեմք բայց այդ օրը չառնել
խոնարհաւի :

Ճեմավայր . — Մեր եկեղեցւոյ բակերը .
Անկոյի . Առժամանակեայ դպար ,
Գրիչ . — Անմեղ մարդասպան .
Քննութիւն . — Ուսուցչին աստիճանաշափը .
Եւ գիտեմձի . — Հրապարակը շատ կոյ , նե-
խելու աստիճան :

Ամուսնութիւն . — Սիրահարութեան վերջակէտ (այլապէս հանդերձ) .

Արժանիք. — Սպառնցաւ. քանի մը հակ
զրկեցէք Ա. Զօպանեան և ընկ. հասցէին:

Բամբասանք. — Մեր կի՛նն րու՛ն անհրաժեշտ
մէկ պէտքը :

Lh—Zmily—Quily

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ԽԱՐԻԵՐԴԵԱՆ ԳՈՀԱՐՆԵՐ

Զարիսյանը ևս կերթում չէ՝ գիտնալ հաշիվ,
Պապը հետ կուգայ, աղբարս շաշիվ.
Տո՛ւր ձառքդ պազնիվ, պապ, մնա շարի,
Երբան վառքնիվ, դստնա՛մ գալ տարի:

Մի շար, մերս, մի, չիմ ղղիր օսար,
Ուր պիւրպիւրի պէս խոր մի՛ եկեղիշար.
Գորս անանաթ քեզի, փորս ծոյ աշեր,
Բեզ մի պի՛ս դառնամ, մի շար, մի հաւն յեր.

Ղորոպէք երթալը հիշ աղէկ բան չէ .
 էն տղին համար օր տրու մանչ է .
 Ազգ ու ազգական կը մոռնայ բոլոր .
 Յիրտը պաղ կըլլի, ոտներն ըլլան մոլոր .

Ղորպէք երթալը ես շատ աշեցի,
Ուրպէն առի արհիս դոռնը տաշեցի.
Ճամբայ պիտ'ընկնիմ, պաշարս առի,
Իմոռ ու դրացին շէն մնալ քարի.

Որ հերիք, մի շար, եսսր սեվրի լիևար,
Հասաւ՝ դորայեթք ես շաս լիւ մևար.
Մորքս մոդաթ եղիր, ելին սիրս մի սար,
Պ/ըրպ/ըրք քուս քևսոնէ իրեն քաւ. :

Ին պապիկ մարիկ, աշ մնաք բարի,
Ինչապա՞հ դառնամ պիտի գալ տարի.
Հաւաքիչ (Մ)

Բարեկեցիկ անի վերջին շաբթոն, մալր մը
իր զաւկին կրօնէր .

—Այդ ի՞նչ աստիճանի գունատութիւն է պա-
ւակո :

—Քննատու թե՛ն է մարիկ, ժամ մը եթէ
քնանալու ըլլամ, անմիջապէս կը կաղզուրուիմ:

— Զաւակս, ինքզինքդ ալ չես մեղքնար, աս
ամեն գիշեր պալօ երթալով ի՞նչ կր հասկնաս .

—Ի՞նչ պիտի հասկնամ, երեսներն գոցելով
սրտերն ինձ բացող կնիկներուն արժանիքը :

Լոնարայի մէջ գող մը վաճառատան մը դը-
րամարկը բանալու տշխատած միջոցին, ետին
կը նայի որ վաճառատան տէրը կեցեր պաղար-
իւնութեամբ զինքը կը դիտէ :


Փողը այս անակնկալ ձախողանքէն օձիքը ազատելու միջոց մը խորհած պահուն, ճէն[տ]մէն վաճառականը անտարբէրութեամբ կրսէ.

—Գործդ շարունակէ բարեկամ, և ժամ առ ժամ գրամարկովը բաց :

Գողը շուարած և բուլտովին զարմացած կը հարցնէ .

—Բայց ինչո՞ւ համար կռկէք որ ձեր գը-
րամարկը բանաւ:

—Որովհետեւ բանալին կորսնցուցած եմ, ու
քանի որ հիմա դուն կը բանաս, գարբինի մը տա-
լիք վարձքս քեզի կուտամ:



ԵՐԿՈՒ ԴՐԱՅՈՒՀԻՔ

Ահազամ մը Պոլսոյ հայաբնակ թաղէ մը ան-
ցած ատենն, տան մը դրանը առջև հետեւեալ խօ-
սակցութիւնք տեղի կունենար.

—Քա Պեղիկ հանժմ, Պեղիկ հանժմ. աչքդ խա-
զայ կնիկ. էրկու սահաթ է ավազ ավազ կը պո-
ռամ, չես իմանար:

—Քա.քո.րուկս կիմանամ կոր սմա՛ աչքը
քեռնալիք խօվան կէ՛նէ հօրը ինկաւ տէ՛ քիչ մը
չէնկէլի պիտի ուզէի. խաղանո՛ ալ կրակին վրայ
չըլլա՞յ: Հա, նայէ պիտի մոռնայի, աչուրնիդ լուս,
անճարակին ալ քրոջի աղջկը կարգեր էք:

— Խոտեղէն հիշ խապուէլ չենք բներ :

—Հախ ունիս քուրուկ, իրաւոր պիտորկայի
ամա, ախ ի՞նտոր քոսմ, կիտեա քի տիմացինս

խույսուզին մէկն է. հիշ առանկ բանի մօտիկ չէ. հաթտա շատոնց է ներքոյ պիտի երթամ. անոր պիտի չի թողուր. «նէ՞ վար քի կիսէճէք-սին» տէյի երեսս ի վեր կը պոռայ: Այս, մենք ալ սանքի կնիկ ենք. հիմակու եէնի եէթմէնե-րը ըլլալու են քի՞ էրկինուն հախէն կան. հէմ բէք ալ աղէկ կընեն. ասանկ մարդոցը հա-խէն դալը հէլալ է:

—Վո՛ւյ, խաթըրա միրզէթ, խույսուզ մար-դուն էրեոր եււմուռնախ տեսնայ:

—Քա, հա, ի՞նչ պտոր ըսէի. փեսանիդ ի՞նչէնի է:

—Վո՛ւյ քուրուկ, տիւշմանս ասանկ փեսի իյնայ. հաշար խոշնիս. ասիկա մէք թէճէլլի-հէն չէր ամա՛ Աստուած ճաշէլնուս սիրտին կէօ-րէ տուաւ. թող տեսնան տէ՛ ճաթին. ան առ միսը կուտէին ամա՛ խըյմէթլի տեղ ինկաւ:

—Աչուընիդ լուս. . . քա աման գուք ալ կը նայիմ քի ամնն պանի աղանճ կը կախէք:

—Քա չէ՛, հիշ հոգս չէ. ըսեն ըսեն վար նստին. տահա շտաթմուան մը հարս է. էրկու իրեք խաթ ֆիտանցու. խասաներ, թօփերով ամեկիքաններ, ո՞ր մէկը ըոնմ. մինակ խուշին սիւտը պակաս է: Տաքը իլէն պարոնտատը վը-րան խնդ կելան կոր. հարս կըսեն՝ պաշխա պան չելլար բերաննուն:

—Աստուած տահա աղէկ ընէ. հալը վախթը տեղն է էղեր. ինչենի՞ է:

—Չարչըյին մէջ խառը մը չօճուխի՞ հար-ցունես նէ՛ կիտէ. աալը շանչը չըղբթկան հա-ճի Միթիկ կըսեն:

—Առ ի՞նչ պիչիմ գէնահաթ է. տահա նոր կիմանամ կոր:

—Հիմաճուկ մարդու մը հետ իքիլի պիլի օրթախ է. պիլիլն միւ շիթէրինները փեսերնուն է. գէնահաթին ալ էրպայը. միւշտէրի մը ծառը անցնի նէ՛ իլլէ պտոր ծախէ. խանալը չու-րութը բէք տեղն է եղեր:

—Աստուած տայ տէ՛ Տուտախըղենց փեսին պէս պան մըն ալ առ չըլլայ. առչի բերան բօֆ-բօֆլաթմիշ ըրին. վեր առին վեր առին ամա՛ տիպը պօշ էլաւ:

—Ինչո՞ւ. ինչէնի՞ է էղեր փեսանին:

—Իրաւոր. թօհաֆ գէնահաթի մը առունը տուին. հիշ իմացած չէի. չարչին խանութքի է եղեր: Հոգի՛, մեր վախթը ասանկ գէնահաթներու անունը պիլի չիյտէինք. եալմաճի. սիմբէշ. խաղաղ. պէյալճի. խախմաճի. Էալլա. անանկ խույսումճի չարչըսին խարբուզ ծախողին՝ կոչո-ցնող չէին ըսեր. հէլէ սա խանութքին բէք թօ-հաֆ բան է:

—Քա մեղայ քուրուկ, դուն ալ չի հասկնա-

յիր. խալֆա ըլլալու է. զէհէր տուն խանութ կը շինէ:

—Վո՛ւյ չէ՛, չէ՛, էս ալ առչի բերան անանկ գիտցայ ամա՛ էօլլէ տէյիլ իմիշ. մէյէր չարչին խանութներուն առջեւը կայնոյ միւշտէրինքը կանչողներուն բէք շատին խանութքի կըսեն հ-ղեր. ատոնք միւ շիթէրինները խանութէ խանութ չէլմիշ կընեն էղեր. ատ միւշթէրին բան մը առնէ նէ՛ բայ կառնեն էղեր:

—Պիր եաշա տահա կիրտիք. աճապա մերի-նըն ալ ասանկ է կըսես:

—Առչի պերան Տուտախըղենք թիւճարի կուտան կորի պէս պահեցին պահեցին. ետքը ամէն պան օրթան էլաւ նէ՛ սրմբած թափուխի պէս տեղերին նստան. միւնմ կը խորաթէին՝ կրխին էկաւ:

—Նայէ՛, բաղդ բաղդ քէլ Խարաքսինն է քի՛ ան խօճա տունը պէքեար կըրեմները լե-ցուց, ըրաւ չըրաւ պէհէրիշ ըրաւ, աղչիկը մէկուն կրխը հանեց, կըսեն կոր քի՛ ցորենի թէլլալ է էղեր:

—Այի քուրուկ, մենք անանկ պաներ կըր-նա՞նք ընել. մերին մարդերը զօռպա են, աչք պանալ չեն տօր: Սա վերի մահալլէի Չըրնըխ Մարթան փեսին համար ալ թօհաֆ գէնահաթ մը ըսին. կայնէ նայիմ ի՞նչէնի էր:

—Կիտնալս խույսումճի է:

—Խույսումճի ամա, խանութ թէլլեա՛հ չու-նենալով՝ կնիկը վարդերու պէս կը նայի եղեր. անցած ամառ թօփխաբու եաղլըխ տարեր. ծը-մեռուան տուելիքը վախթին շտկեր քէօմիւրը փառը, սոխը, սապօնը լեցուցեր. պիլիլն առ պաները խույսումճի չարչըսին «մառ մէշն» է ճիւղթինով կընէ էղեր:

—Հիմա կը մարիմ խնդալէն. քուրուկ, առ ի՞նչ պիչիմ գէնահաթներ կան էղեր:

—Հապա. հէմ առ «մէշնէճի»ներուն էանաֆ պաշին պիլլէ կայ եղեր, բէք գէնիլին:

—Հիմալուան գէնահաթներուն խելք չի հասնիր կոր. կիթաթքէլ կը պարկնանք կոր. տալը տալը բերէվիզ, տահա նէլէր կէքը՝ լիւղ ըսելով՝ հօրին չէնկէլը առած մեկնեցաւ:

ՋԱԻԹԱԿ

ՆԻԽԱԶԴ

Թատերասէր երիտասարդաց կողմէ փորձի դրուած է «Յուդիդ կամ սէր կրօնից և հայրենե-կաց» անուն հաշակաւոր Ռասինի մ արարուած ող-բերդութիւնը, տաճկերէն լեզուաւ, «րօտօրէն Սանդրալի թատերասրահին մէջ պիտի ներկայա-ցուի ի նպատակ տիկին Պայծառ Փատուլեանի:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (48)

ՈՐՆԵ ՏՐ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

ԿԱՐՄԻՐ-ՄԱՄՈՒԿԸ

Այս նաւեր ահագին յոյժ փառաւոր շէնքեր են, ոսկեցոծ ճակատներով, ամենաշնորհալի խորհրդանշաններով պէս նուաճ և ծաղկալից պատշգամբներով զարդարուն:

Իրարու բով շարուած էին, նեղ միջոցներով միայն իրարմէ բաժնուած: Իրենց առաջոյթները կը ձեւացնէին լայն մայթեր, ուր օդ կառնէին, և զանոնք լուսաւորող հազարաւոր լամպարները աներեւակայելի եզականուածութեամբ բնակարաններ կ'ընէին զանոնք:

Հաճոյքի բոլոր այս վայրերէն, ուր կը դիմէին չինացի անգործ հարուստները՝ ծխելու և խմելու համար, կը խուսափէին զուարթ ծիծաղներ զորս կը կրկնէին գետակներուն արծաթանգները, և բուն ու մեծափայլ լոյսեր, որք չըջնալէ հօտերու պէս կը պարէին ջուրէրուն վրայ, երեւան հանելով անհեթեթ ստուերներ մը: Թին զանգուածին մէջ խորսխած մեծ նաւերուն:

Անոնց հոտ բուրումներ կը թռչէին օդին մէջ՝ խին հետ մաց պատուհաններէն, ուր, բմահաճօրէն քանդակուած շրջանակներու մէջ կարծես կերեւային սիրուն աղջիկներ՝ կոշտուկոպիտ սիրահարներէ հետապնդում: Հազարումէկ Գիշերներուն մէկ առասպելական քաղաքն էր գոգցես:

Բայց արժանաւոր նախագահը անշուշտ յաճախակի այցելութիւններ Երած էր հոն, վասն զի իր մակը կը կը սահէր իրարեւ ծանօթ տեղ մը, և պարզ նշանի մը վրայ, իր նաւաստիները ժողովան՝ այդ շարժումին վարժ մարդերու պէս:

Մէնկ հրամայեց որ բացը իրեն սպասեն, ծանրօրէն ելաւ նաւուն մէկ սանդուխէն, և դուռը փակող փսիւթը վեր առնելով մտաւ հետաքրքրաշարժ շէնքին մէջ:

Իր ծառաներուն հրամայած էր որ եթէ արեւուն ծագելէն առաջ նորէն չտեսնէին զինքը, գային առնէին ու Հոնան տանէին:

Միւս նաւերուն պէս, այն նաւը որուն վերջին անգամ յաճախորդ ըլլալ ուզած էր Բերքինսի բարեկամը, քսանըհինգ երեսուն մէթր երկայնութեամբ լայն շէնք

մըն էր:

Առաջին սենեակը հասարակաց սրահ էր: Գետիւնը ծածկուած էր թանձր գորգով և շուրջանակի կակուղ բազմոցներ կային: Հոն էր որ պահ մը կանգ կառնէին բազմութիւն յաճախորդները՝ քանի մը գաւաթ թէյ խմելու համար ընտրելէ առաջ հաճոյքներէն այն որով կուզէին զուարթանալ:

Այդ խոցէն ետքը, գրեթէ նաւուն մէջտեղ, փոքր սանդուխ մը որ վերին յարկը կը տանէր, ուր կային երկու փոքր սրահներ հեշտօրէն գեղազարդուած, և անոնց ետին ընդարձակ սրահ մը խաղամոլներուն յատուկ:

Ընկերութիւնը արդէն բազմութիւն էր հոն ու գլորդուաւ: Ստակներուն թաւալումը և ոսկի ու արծաթի ցուլածոններուն հնչիւնը կը լսուէին:

Բայց Մէնկ թղթախաղ չէր սիրէր: Հարժում մը ըրաւ տեղւոյն տէրը վազեց եկաւ: Քանի մը խօսք ըսաւ անոր, և երկուքն ալ անհետ եղան գետնայարկին երկրորդ մասին մէջ:

Հոն, վեցի չափ փոքր խոցեր կը գտնուէին որուն ամբողջ կահն էր յոյժ ցած անկողին մը և լաքի սեղան մը օտիոնի ծխողներուն անհրաժեշտ բոլոր գործիքներով: Պատերը ծածկուած էին նրբահիւս փսիւթներով որք ակործելի զովութիւն մը կը տարածէին: Լապտերներ կը լուսաւորէին զանոնք հեշտօրէն անուշ լոյսով մը:

Հարուստ յաճախորդները, փոխանակ հասարակութեան հետ խառնուելու, հոն, մենութեան ու հանգարտութեան մէջ, կը գործածէին հրաշալի թմբկեղաններ:

Հասնելէն հինգ վայրկեան ետքը, Մէնկ տեղաւորուած էր այս խոցերէն մէկուն մէջ, ուր մեղկօրէն պառկած, իրարեւ փորձառու մարդ կը պատրաստէր իր առջին ծխափայտը:

Անշուշտ ոչ ոք պիտի կրնար գուշակել թէ յաջորդօրէն ինչ տխուր արկածի մը սահմանուած էր եղեռնադատ ատենին առաջին դատաւորը, երբ զինքը տեսնէր այդքան հանգարտ որ մերկ վիճակի մէջ:

Վասն զի օտիոնը չի ծխելիւր ծխախոտին պէս: Ճշմարիտ սիրահարը գերագոյն ու վերջին ձեւը ինք կուտայ անոր, փոքր լամպարի մը բոցին ժողովներով խաշխաշի հիւթին թանձր կաթիլը որ անուշահոտ բուրակ մը պէտք է ըլլայ:

Բաւարի Մէնկ իր մատներուն մէջ երկար ատեն պը-

յորեց պողպատէ երկար ասեղը որուն ծայրը կը ճարձատէր թմրիչ հիւթը, յետոյ երբ տեսաւ որ պէտք եղածին չափ թանձրացած է, փափկօրէն դրաւ իր լայն ծխափայտին լուսաւոր վառարանին վրայ, եւ կռնկին վրայ փռուեցաւ, զգայնութեամբ բաշելու համար զայն:

Այս առաջին ծխափայտին յաջորդեց երկրորդը, յետոյ երրորդը, յետոյ չորրորդը, բայց անոնց ամէն մէկուն միջոցը երթալով կ'երկարէր: Վասն զի բաշ մանտարէնը հետզհետէ կը կրէր թոյնին ազդեցութիւնը, ու միայն զայն ծխելով, այլ եւ շնչելով ապականուած օդը որով իր խուցը լեցուած էր անմիջապէս:

Իր աւշային խառնուածքը զերծ կը պահէր զինքը այն մոլեգին յիմարութենէն զոր շատ անգամ առաջ կը բերէ ամբողջ ջղային մարդոց վրայ, օրինակի համար Մալեկիոյ ժողովուրդոց վրայ: Բայց, անցնելէ յետոյ աստորժեղի գրայութիւններէն զորս փնտռած էր հոն, խրախճանք ու տարփանք երազելէ յետոյ, ինքզինքն ա'յնքան թեթեւ զգալէ յետոյ որ թուած էր իրեն թէ իր սիրելի բարեկամին կերթար միանար ի Հոնկ—Քորկ եւ թէ Չինու կայսրը առաջնակարգ մանտարէն կանուանէր զինքը, շատ շանցած ա'լ կարողութիւն չունեցաւ ծխախառը լեցնելու:

Այն ատեն մեղմիւ երկնցաւ անկողին վրայ, ժպտաշուրթն եւ աչքերը պարապին մէջ, իր առջեւէն անցնող երկնային տեսիլքներէն օրօրուած. երկու փշապներու մարտ, ազդեղներու եւ նետերու շատուածը, բոլոր հերոսները պուտտայական դիցարանութեան: Ոչ կիներուն երգերը, ոչ խաղամոլներուն աղաղակները, ոչ մէկ բան կրնար խլել զայն իր ջլադրգիւ երազներէն:

Երկու երկար ժամեր անցան այսպէս եւ լուսութիւնը տիրած էր Մարգարիտներու գետին վրայ, երբ Մէնկ, որուն քունը ուշաբարձական կերեւար, յանկարծ թեթեւ աղաղակ մը լսեց:

Կարծելով որ իր դրան դարկած են, ջանալ աչքերն այն կողմ՝ դարձունել: Բայց նոյն աղմուկը նորէն լսուելով, հասկցաւ որ ձեղունին անկիւնէն կուգար, իր գիմացէն, եւ իր ակնարկը հոն ուղղեց ծանրապէս:

Կարծես կը բերդէին պատը ձածկող փսիւթին տակէն: Կը թուէր իսկ թէ այդ փսիւթին անկիւնը կամաց մը վեր կեցար:

Ըստ երեւութիւն աննշան այս միջադէպէն սաստիկ հետաքրքրուած, ալ աչքը չզատեց նայնտեղէն ուր կանգ առած էր, եւ շատ շանցած համադուեցաւ թէ չէր սրխալած:

Եղէգէ թեթեւ հիւսուածքը կ'երերար անբազար ճիգերէ, եւ ծխողը կը հարցնէի ինքնիրեն թէ հօվը չէր այդ շարժումը պատճառողը, երբ վերջապէս հասկցաւ շարժառիթը: Հետզհետէ շարունակուելուն շնորհիւ, կը նշմարէր մազոտ եւ մաքիլաւոր թաթերը կենդանիի մը որ տակաւին պառկած էր վարագոյրին տակ:

Քնացողը շուտով դգաց թէ կը դուրդլայ գարշանքի սարսուտով: Այդ թաթերուն ետեւը ահագին մամուկ մը ցուցուցած էր իր ալլանդակ գլուխը: Յետոյ յանկարծ դուրս ելաւ եւ ամբողջովին երեցաւ: Անոր աւթն աչքերը իր վրայ սեղանուած էին. իր շոշափուկները կը շարժէր կարծես գետինը շափելու համար իր շուրջը:

Մանտարէնը փորձեց ոտքի ելլել հալածելու համար գարշելի կենդանին, բայց ամբողջէն կիւսուեցաւ, շարժում մը չէր կրնար ընել: Սակայն վայրկեանական վարանումէ մը ետքը հրէշը ճամբայ ելած էր միջնորմին երկայնութեամբը եւ չիպ շիտակ անկողին կ'աղլուէր:

Երբ խուցը լուսաւորող լոյսի ճառագայթին մէջ մտաւ, Մէնկ որուն ահաբեկ ակնարկներն անոր կը հեղտէին, կրցաւ գիտել զայն իր բովանդակ ահարկութեանը մէջ:

(Շար.)

ԾԱԽՈՒԻ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ կը ծախուին:

Լուսինեան Իշխան — Ֆրանսահայ Բառարան. դին 25 ֆր. ոսկեդրամ. Պուլկարահայ վարժարանաց համար 20 ֆրանք:

Թ. Գ. Հինդլեան — Տեառական և գործնական Բերականութիւն Պուլկարեւելի լեզուի 1 ֆր

Ե. Մուրատեան — Քննական պատուութիւն Արշակ Բ. ի և անոր Պապ սրբւոյն. 2 ուկէս ֆր. Շէյքսպիրի Համլէթը, սղերգ. 2 50 ֆր. Թրթուումներ (ոտանաւոր) 25 սնդ.

Հովաստէն " 25 "

Արտասուլթար " " 20 "

Բազմախաղ պատկեր 25 սնդ.

Թասլաքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ. Բարեկենդանի անկուտիները, կատակաստղ արար 50 սնդ.

Մահճուպիլէթին միւքեաֆաթը, գօմէտի պիւմէրտէ, 50 սնդ.

Գողանձ գօմա եախօտ էնֆիլ, ճի, գօմէտի պիւմէրտէ, 50 սնդ.